Արձանագրություն N 2
«ԷԿԵՆԳ-ԳՀԱՊՁԲ-17/7» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «27» Սեպտեմբեր 2017թ.
ժ. 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գրիգորյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Մինասյանը և Տ. Մարկարյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Բաղալյանը

I. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստի մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, ներառյալ ԱԱՀ.

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի		Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	գինը /ՀՀ դրամ/	անվանումը	գնային առաջարկը	հասցեն
1	Բենզին, պրեմիում	375,000	Սիփիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	370,000 (երեք հարյուր յոթանասուն հազար)	ք.Երևան, Պուշկինի 1
			ՖԼԵԾ ՍՊԸ	405,000 (չորս հարյուր հինգ հազար)	ք. Երևան, Եզնիկ Կողբացի 30
			Մաքս Օիլ ՍՊԸ	375,000 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար)	ք. Երևան, Տպագրիչների 8. 1/1 տարածք

27.09.2017թ.-ի ժ 11:00-ին հանձնաժողովի առաջին բացող անդամը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանը ներկայացրեց բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատեց իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնված հայտերի բացման մասին արձանագրությունը կցվում է սույն արձանագրությանը:
Ոչ մի հայտ հետ չի կանչվել և չի փոփոխվել:
Հայտերի վերաբերյալ հարցումներ (պարզաբանումներ) չեն եղել:
Բոլոր մասնակիցների.

1. Հայտերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան.
2. Բացված հայտերում հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը առկա են.
3. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.

4. Գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար՝ բացառությամբ ՖԼԵՇ ՍՊԸ-ի գնային պայմանի, քանի որ գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

II. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. ԷԿԵՆԳ-ԳՀԱՊՁԲ-17/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել Սիփիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ-ին,
2. Սիփիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ-ն պետք է հրավերով սահմանված ժամկետում ներկայացնի հրավերով պահանջվող 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:
   Կողմ՝ 3, դեմ՝ 0
3. Գնահատող հանձնաժողովի հաջոր դ նիստն անցկացնել՝ Տիգրան Մեծ 4, 5-րդ հարկ հասցեում 2017թ.-ի հոկտեմբերի 2-ի ժամը 11:00-ին:
   Կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ _____ Մ. Գրիգորյան

գնահատող անդամներ _____ Տ. Մարկարյան

_____ Հ. Մինասյան

քարտուղար՝ _____ Ա. Բաղալյան